

«Արարատի» ընթերցողներն և մանաւանդ «Ներսէս Ե. անմահանուն կաթուղիկոսի կենսագրութեան նիւթեք ժողովողներն անշուշտ հետաքրքրութեամբ կկարդան սոյն երկու գրութիւններն, որոնք հրատարակում են այստեղ: Դրանցից առաջինը «Ներսէսի նամակն է, որ գրել է Թիֆլիսի առաջնորդ եղած ժամանակին 1818 թուին մայիսի 6-ին՝ Խաչատուր բէկ Շահնազարեանցին. իսկ միւսը՝ Եփրեմ կաթուղիկոսի կոնդակն է, որ ուղղուած է 1825 թուին Դաւիթ խան Մելիք Շահնազարեան Շափուրեանցին: «Ներսէսի նամակից երեւումն, որ նորա և կաթողիկոսի յարաբերութիւնն այնքան սառած է եղել, որ ժամանակակից նշանաւոր Հայերը հարկաւոր են համարել իմանալ այդ սառնութեան պատճառները, և մէկից լսելով անբաւականութեան կէտերը՝ կամեցել են միւսի բացատրութիւններն էլ լսել. իսկ Եփրեմի կոնդակը ցոյց է տալիս, որ նախկին բարեկամական յարաբերութիւնն այնպէս վերանորոգուած է եղել երկուսի մէջ, որ կաթողիկոսի՝ դէպի «Ներսէս» ունեցած մեծ վստահութիւնից դժգոհ վերջինի հակառակորդներն սկսել են զանազան զրաբարտական լուրեր տարածել ազգի մէջ. մոքեր պղառելու և գայթակղեցնելու դիտաւորութիւնով:

Յիշեալ գրութիւնների պատճէններն օրինակուած են Դարբանդում պ. Գէորգ Մէլիք Շահնազարեան դէ Շափուրի թրղթերից և օրինակողն է պ. Յարութիւն տէր Մկրտչեան, որից և Խմբագրութիւնս ստացաւ շնորհակալութեամբ:

(Պատմէն)

Հարցմունք՝ Նորին բարձրագոյն Քահանայապետութեան Տեառն Եփրեմայ և պատասխանատութիւն Ներսիսի Արքեպիսկոպոսի Վրաստանու և այլոց:

1818 Մայիսի 6 թիվլիզ:

Բարեծնունդ Խաչատուր բէկ Շահնաղարեանց զգօնամիտ Ղուլամ Փելիլզմաթն Նորին Օգոստավառ ժառանգի Տէրութեան Պարսից:

ի Քրիստոս սիրեցեալ արգոյ:

ի 1818 մայիս 6 թիվլիզ:

Պատասխանի բանիցն յանձնելոց ձեզ գրովք և մատամբ իւրոյ բարձր Արքաղնագոյն Քահանայապետութեան. տասն և եօթն Գլուխվք Համաձայն Հրամանագրութեանց Նորին առ մեզ. այն է. Վի յընթեռնուլն ձեր ի լուր մեր մի առ մի վասն իւրաքանչիւրոց նոցին, բացայայտեցաք ձեզ վասն իւրաքանչիւրոց նոցին. առ զի առաքեալ էիք առ մեզ զօրինակն գրոյ իւրոյ Վեհափառութեան, ահա և մեք ըստ ձեր հաճոյս զոր խօսեցաք բանիւ, պատկերացուցանեմք գրով ի վերայ երկրպագելի բանից Աւետարանութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի թէ եղիցի ձեր բանն այսն այս, և ոչն ոչ. այն է ամենայն ճշմարտութեամբ:

(Պատմէն)



Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Եփրեմ և շնորհիւ Նորին կաթուղիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարք Աւաքելական եկեղեցւոյ Քրիստոսի նաև լուսահիմն մայր Աթոռոյն կաթուղիկէ Եղմիածնի: Երկնառատ օրհնութեամբ և քրիստոսածիր ողջունիւ

բացածանուցանեմք ամենաջերմեռանդն լուսաւորչածին որդւոյ լուսահիմն մայր Աթոռոյն պայծառազարմ և մեծազգի իշխան Դաւիթ Խան Ծատուրեան Մելիք Շահնազարեան Շափուրեանց ընտրելագոյն սիրելոյ մերում ի Տէր խնդալ:

Զի ի գալ Զեր առ մեզ ամի Տեսուն 1825 յամսեանն Ապրելի 6 երբ էաք պանդխուութեամբ ի սուրբ Նշանի վանսն Հաղբատայ սոխագեալ յամենագովանի ջերմեռանդութենէ սրտի. խնդրեցէք ի մէնջ զճշմարտութիւն յաղագս երից իրաց և համբաւոյ յանինայ տարածելոց զմէնջ առ ամենայն հայկազնեայ ժողովուրդոն մեր՝ որպէս և առ օտարազգիս ևս:

Նախ յաղագս այնը՝ իբր թէ կնիք սրբոյ Աթոռոյն և Հայրապետութեան մերոյ գտանի առ որբազան Ներսէս Արքեպիսկոպոսն Հայոց Վրաստանի և ընդ Նորին հրամանաւ և իշխանութեամբ. որոյ և զօրութեամբ վարէ զիշխանութիւն և հրաման մեր: Երկրորդ յաղագս այնը իբր թէ յիշեալ Ներսէս Արքեպիսկոպոսն զօրութեամբ այնը հայրապետական կնքոյ մերոյ հաւաքէ առ ինքն զամենայն արդիւնս սրբոյ Աթոռոյն ի նուիրանաց ժողովրդականաց, և ի կիր առնու զամենայն ըստ հաճոյս իւր: Երրորդ յաղագս այնը, որպէս թէ մեք հաստատեալ եմք ի միտս չինքրագառնալ ընտառ ի սուրբ Աթոռն, այլ մնալ ի սուրբ վանսն Հաղբատայ:

Յաղագս այսոցիկ երից համբաւուց անընտրողաբար հրատարակելոց զմէնջ, որպէս բանիւ բերանոյ՝ նոյնակէս և միջնորդութեամբ սոյն նամակի մերոյ բացայայտեմք ձեզ զճշմարտութիւն ըստ խնդրոյ ձերոյ վկայութեամբ խղճի մոտաց մերոց:

Նախ ճշգրտաբանեմք ձեզ զայն, զի կնիք սրբոյ Աթոռոյն և Հայրապետական իշխանութեան մերոյ գտանի առ մեզ և ոչ առ Ներսէս Արքազան Արքեպիսկոպոսն և եթէ ստիպելոյ հարկին պիտոյանայ գրութիւն ինչ ի դիմաց մերոց՝ մեք գրեցուցեալ յառաջտելայութեան մերոյ կնքեալ, առաքեմք առ որ պէտք իցեն բայց միայն կարգեալ եմք զնախագրեալ արքեպիսկոպոսն ընդհանուր կառավարիչ ամենայն հոգենորական գործոց պատշաճաւորելոց գերագահ Մայր Աթոռոյն և Հայրապետական իշխանութեան

մերոյ, զի նա ըստ որոյ այր բանաւոր՝ ականաւոր և քաջահանձար՝ փոխանակ մեր նա ինքնին տնօրինեցի զամենայն գործառնութիւնն և ամենայն կառավարութիւն նորա զոր առնէ ոչ է առանց հրամանի և խորհրդին մերոյ: Երկրորդ՝ ոչ է սուտ համբաւն՝ թէ Սրբազն Ներոէս արքեպիսկոպոսն հաւաքէ առ ինքն զամենայն արդիւնսն սրբոյ Աթոռոյն բայց սուտ է այն՝ թէ ծախէ զայն գումարսն ըստ հաճոյս իւր. քանդի որչափ ստացեալ է ցարդ. գրեթէ միով չափ աւելի ևս ծախեալ է թէ ի վճար պարտուցն և թէ ի պիտոյս կարեորագայն հոգալեաց Աթոռոյն և մեր. որպէս և զբանի մուրհակաւ աղատեալ նորա ի պարտատեարց գտանին առ մեզ: Երրորդ՝ զի երրէք ոչ եմք անցուցեալ ընդ միտս չվերագառնալ ի սուրբ Աթոռն, այլ՝ կեալ և մնալ ի սուրբ վանսն Հաղբատայ, արդ՝ մտերիմ լիցի բանո. զի որպէս մեր՝ ի սկզբանէ ընտրութեան մերոյ յաթոռ Հայրապետութեան և այսր անձնանուէր ընծայեցուցաք զանձն մեր ի պայծառութիւն բարձրագահ մայր Աթոռոյն նոյնպէս և յայսմհետէ ևս ճգնիմք ի կամս և ի միտս ամենայն կարողութեամք հոգւոյ իմոյ և ամենայն վշտամբերութեամք մինչեւ տեսանել զմայր սուրբ Աթոռն աղատեալ ի ծանրութենէ պարտուց և վայելչացեալ ամենայն բարեկարգութեամք և շինութեամք և ապա գարձ առնել անդ ըստ Տեառն Աստուծոյ յաջողելոյ, ուր և հանգչել յամենայն տառապանաց. և այլով յանձնեմ զձեզ Տեառն Աստուծոյ մնալ ողջութեամբ:

Առ բանական նույն վասն ձեր աղօթարար
Կաթուղիկոս Ամենայն Հայոց
Վշտամբարար ու ճանապարհութեամբ վշտամբի Եֆրեմ:

Ի 1825 ամի Տեառն Ակադեմի 6:

Ի Սուրբ Նշունք Լուսն Հայոց ապա:

№ 1. Բանք Նորին Բարձրա-
գոյն Քահանայապետութեան:

Պատասխանի մեր վասն իւ-

Գրեալ է տուն բաժանեալ
յանձն կործանի. սիրելի դու
ևս-մէջն ես ևլն:

Այս անսխաղելի աւետարա-
յանձն նութիւն է ամենաճշմարիտ
վարդապետին մերոյ Յիսուսի
Քրիստոսի որում Հաւատա-
ցեալն եմ և վասն այնորիկ իսկ
ընդ նախանկատելն իմ վասն
այնպիսի բաժանմանց Խորհր-
դոց սրտից և կամաց ներքնոց,
և կործանմանցն Հետեւեցելոց,
փութացայ իսկոյն գէթ զանձն
իմ կացուցանել ազատ. իբրև
անբաւական ներգործելոյ ինչ
ընդէմ այնոցիկ. ըստ այսմ և
մեկուսացայ այսր. ապա ասոէ
ևս այնպէս դատապարտեալ
լինիմ, ահա յաւէտ պարտաւոր
զիս Համարիմ և նախախնա-
մութեանն ինձ Աստուծոյ մար-
դասիրի, որով թէպէտե գտայց
ես նաև ի բացակայութեան
իմում բանակոծեալ. այլ առա-
ւելու ինձ յոյսն ապահովու-
թեան որ ապացուցանի Հաւա-
տարմագոյն ևս. թէ անմասն
եմ ամենևին ես յամենայն
ժամանակս քահանայապետու-
թեան, Նորին Վեհափառու-
թեան անակնկալ տարաբաղդ
կացութեանց քահանայապետա-

կան Աթոռոյ ամենայն Հայոց. և վասն ապագային ևս ակն ունիմ ոչ երբէք իւիք լինել բաժանորդ կամ առիթ կործանման սրբոյ տաճարին Առուծություն:

№ 2. Քահանայից համար խաչ խնդրելով և զպատասխանելով:

Յորժամ ես խնդրեալ էի վասն խաչիցն՝ յայտնելով զանուանս քահանայից և զպատճառսն. և Նորին բարձրագոյն Քահանայապետութեանն պատուելով զինդիր իմ յղեալ էր զկոնդակսն յանուն իւրաքանչիւրոց նոցին, զինչ այնուշետև պատասխանել հարկ իցէ եղեալ յոյր սակա ստգտեալ լինիմ այդ:

№ 3. Եղբօրդ ողջոյն գրելս և պատասխան չստանալս ևլու:

Գրեալ է եթէ եղբայր ոք կամ քոյր իցեն մերկը. կամ կարօտեալ աւուրն կերակրոյ և ասիցէ ոք ի ձէնջ ցնոսա գնացէք խաղաղութեամբ ջեռարուք և յագեցարուք. և ոչ տայցէք նոցա զպէտս մարմնոյն, զինչ օգուտ իցէ. ըստ այսմ ուրեմն թողեալ զայլոցն նախանձելոց, յորժամ գրեցի ես ընդ երկար աղերսարկութեամբ յամի 1818 ապրել 21 և առաւել ևս թախանձանօք ի 4 Յուլիսի ի նոյն թիւ. յաղագս հատուցման դրամոց եղբօրն իմոյ. և կամ գոնէ շնորհ ունել առնել զո-

զորմաւթիւն տալոյ զպատաս-
խանի իմն որպէս և կամք իցէ-
Տերութեան իւրոյ արժանացաք
արգեօք մինչև ցայժմ բառիւ
միով ընդունել զպատասխանի
և եթէ ոչ զինչպիսիս վասն
ողջոյն գրելոյն ընդ ժամանակս
ժամանակս պահանջէ յինէն
կամ յեղբօրէ իմմէ զպատաս-
խանագրութիւնս Նորին Սըր-
բութեան:

№ 4 Վասն Մելիքի մօր վախ-
ճանման մսիթարանք գրելս
ձեռամբ ձեր՝ գնալդ և բարե-
պէս կառավարելու յայլմէ լուաք
և ի ձէնջ պատասխանի չստա-
ցաք:

Գրութիւն իմ յայնմ մասին
այն միայն պարտ էր լինել թէ
գիրն որ առ Մելիքն հասուցի
ինքեան ըստ հրամանի ձեր և
եթէ անփոյթ լինելն իմ յա-
ղագս գրելոյ զայնս, պակասու-
թիւն իմն պատճառեալ իցէ
յինթացս բարւոք կառավարու-
թեան Նորին Վեհավառութեան
արդարեւ իմ է պարտաւորու-
թիւն և խոստովան լինիմ ին-
ձէն թէ իրաւունք են այդ-
պիսի մեղագրութիւնք:

№ 5. Նմանապէս աղայ Յովա-
կիմի կենակցւոյն կողմանէ գուք
տեղդ ևն. և մեզ չգրելն:

Փաքէթք փակեալք քանիցս
անգամ ի կոնսիստորէն և յայ-
լոց ես ինքս առաքեալ առ Նո-
րին սրբութիւն, յետ քանի
ամաց ընդ լսելն իմ, համարե-
լով թէ գուցէ վաղ ուրեմն
գրեալ այլոց, անվայելուչ իմն

վարկայ աւելորդաբանել վասն
ոչ յատկացելոյն ինձ:

№ 6. Գրեմ քեզ թէ քո
տնկեալն եմ և գու հրապա-
րակես թէ իմ տնկածն կիլտ-
րեմ *):

Յայսմ ամբաստանութեան
Նորին Բարձրագոյն Քահանա-
յաղետութեան արդարացուցէ-
զիւրն դատաստան այն զի ա-
ռաքեալն իւր որպէս նուիրակ
ոչ առանց թելադրութեան իրիք
և յուսոյ այն ինչ անզատկա-
ռաբար յետ բազմաժամնա-
կեայ առանձնութեամբ Հըռչա-
կելոյն զմէնջ գոզս 15 հազար
թումանի. ուրացողս Աթուոյ
Էջմիածնի և լընդունողս կա-
թուղիկոսութեան Նորին Սըր-
բազնութեան, լրբացաւ նաև ի
ներկայութեան իմում զմիաբա-
նութիւն Աթուոյ Էջմիածնի ցու-
ցանել զնոյն իւր հեղինակս և
ասել զանձէ լուեալս և ու-
սեալս ինձէն յայնմ ատենի
քննութեան իմոյ և հետեւելոյ
իրացն ստուգութեան, ճշմարիտ
է. զի ասացի ես ի դատապար-
թեան անզգամելոյն թէ յոր-
ժամ Նորին Սըրբազնութիւն ին-
քըն վասն իւր վկայէ յիմումն
մասին որոյ գտանի առիս և
ձեռագիրն թէ քո տնկեալ
ծառն եմ. զիարդ ի վերայ ոյն-
պիսի ջատագովութեանցն զի-
նէն, լրբացայք գուք չարախօ-

*) Եւազնութեան. յայսմ 6. թէ
հարց և պատասխանոյ միջի գոյ
քառ իմն - ի դատապարտութիւն ա-
նըզգամելոյն, որ վերաբերի առ Զա-
քարիա եպիսկոպոսն Գուլասպեանց:
Խաչատուր քէկ Շահնազարեանց,

սել ի վերայ մեր զայնպիսիս.
բայց ես գոլով կենդանի ոչ
նուաստացուցից զանձն իմ
յանզգամութենէ ձեղապիսեաց
և ոչ ես կորուսից բնաւ զի-
րաւունս իմ և զարժանաւորու-
թիւն և եթէ Նորին Արբաղ-
նութիւն գուցէ երկայնամիտ
առ այդպիսի անզգամութիւն
ձեղապիսեաց, սլարտաւորեմ և
ես ջանալ ի կորել զոր տնկեալն
իցեմ, ի կորուստ իմ և բաղ-
մաց:

№ 7. Հանդիսով ասես. ով
որ նորա գիր գրէ՝ օրինակն
ինձ ցոյց պարտ է տալ թէ ոչ
ելն. մի մարդ կայր ինձ գիր
գրող. այն ես արգելեալ ես ելն:

Եթէ ոք չիցէ անզգալեալ
յիմարութեամբ, անարժան հա-
մարի հանել ի շրթունս զայն-
պիսի անտեղի հրաման. նա զի
և կայսերք հզօրագոյնք, ան-
բաւական ճանաչեն զիւրեանց
հրաման վասն ամենայն այդ-
պիսեաց, բայց եթէ ինքն խո-
սողն յունկս Նորին Արբութեան
համարձակեացի ասել յայտնա-
պէս թէ լուեալ իցէ ինքն յի-
նէն կամ յայտնեալ է զոմն
այլ որ վիայիցէ լուեալ յինէն,
այն է զի անձամբ զանձն ա-
նարգեալ այնպիսի անզգացեալ
յիմարութեամբ իմով, գտայց ին-
ձէն վատթարեալ: Բայց եթէ Նո-
րին Վեհափառութիւն տուեալ
իցէ զոմեղի ամենայն այնպի-

սեաց յորոց լոէ զանտեղիսն զայնպիսիս և այժմ ևս թողուցու զայն առանց օրինաւոր վերահասութեան, յայնմ ևս հաճութիւն կամաց նորա կացցէ փառաւորեալ:

№ 8. Ահա տասն ամ է որ թէ յայդը ի Վրաստան և թէ ի ներսն ի մեծն Ոռւսաստան. մի անգամ նուիրակութեան է պատահեալ. վասն էր այս:

Գոլով յայտնի՝ զի ոչ առաքողն իմ նուիրակաց և ոչ առաքեալն. ես ինքն եթէ տարակուսեցայց ի մասինդ յայդմիկ. ի Նորին Սրբութենէ և ի Խորհրդականաց կառավարութեան Աթոռոյն, պարտիմ ընկալնուլ զլուծումն իսկ զի հարցանէ զինէն, նախ զիս յայտնեսցեն թէ ի վերայ որոյ սկզբանց կարող իցեմ ես մակարերել զիմն պատասխանի:

№ 9. Վասն 15 հազարին այնպէս չէ զոր լուեալ ես և կամ վասն Ղփշաղացուն:

Վասն սոյն 15 հազարին ընթերցայ առաջի ձեր կանխաւ գրեալսն իմ յառաջ առ Նորին Վեհափառութիւն յամի 1816 Փետրուար 2, և թէ յետ չորից ամաց նորոգ պատասխանելն այժմ բանիւ ձեր ինձ այնպէս, վայելչական իցէ եղանակի բարւոք կառավարութեան կամ պարտուպատշաճ դրութեան կամաց և հաճոյից Նորին Սրբութեան ընդ իմումն գատափետեալ ծառայութեան,

դուք ընտրութիւն արարէք:
Եւ վասն Վկչաղեցւոյն, եթէ
այնպէս հաւատարիմ իցէ եղեալ
ինքեան վկայութեամբ Նորին
Սրբութեան, ես յանձն առ-
նում զիմ սխալանսն. և ու-
րախ եղէց թէ բաւականու-
թեամբ արժանաւոր գործակա-
լութեան նորա, գոյցի իւր տէ-
րութիւն մսիթարեալ հոգեպէս,
և սուրբ Աթոռն պայծառացեալ
վերահռչակեալ:

№ 10. Քեզ ցաւակից գի-
տելով խորհուրդ հարցանեմ և
դու ասես խելքս չէ բաւական:

Կախ թէ խօստովան եղեց
ես վասն տկարութեան իմոյ
յինչ և իցէ իրս, յուսամ թէ
ոչ մեղադրեցաց օրինօք, այլ ես
ոչ կարողանամ մոաքերել բնաւ
թէ առեալ իցեմ երբեմն և
մեք կամ գրեալ թէ խելքս
չէ բաւական. որոյ խնդրեմ,
կամ յիշեցուցանել ինձ զարդն
որում ասացեալ իցեմ ես զայն,
կամ մարդասիրել առաքել ինձ
զօրինակն այնպիսի գրութեան
իմոյ. և ես ի մասինս այսմիկ
վասն նմա իմոյ խորհրդատւու-
թեանց ընդ իմ անտեղի վըս-
տահութեանց, ընթերցայ ի լուր
ձեր զօրինական ոմանց որոց
կարող էք դուք ինքնին վկայել
վասն սմա:

№ 11 Վասն կաւալերիդ
շնորհաւորելու և յը պտտաս-
խանելու:

Բաց ի գրելոյ, թէ շնորհա-
կալ եմ ի շնորհաւորելոյդ ինձ,
զի՞նչ այլ կարող էի գրել. իսկ
զի՞նչ պահանջէ յինէն Նորին
Արբագնութիւն վասն լռելոյ
իմոյ այն մասին. յանձն առ-
նում զիմ պարտաւորութիւն
վասն, ոչ համարձակելոյ իմ
ի վերայ աւետարանական հրա-
մանացն՝ թէ եղիցի ձեր բանն
«այոն — այո — և ոչն ոչ»:

№ 12.—Դու ի գնալդ աստի
բացի յայն արգեանց պէղառա-
րելու 5000 թուման պարտք
թողիր մեզ. որպէս դաւթարն
քո ձեռագրովն կայ: Այժմ
գրես թէ՛ էր. և այն և այսու:

Բառն, պէղաս-սշելլո, թէ ի՞նչ
նշանակել ունիցի աստէն, ան-
գիտանամ արդարեւ և ի լսելո
վասն եղանակի նշանակի նշա-
նակութեանցն պատասխանեցից
ամենայն խոնարհութեամբ. իսկ
յաղագս 5000 թուման պար-
տուցն ցուցի ձեզ զիսկն առիս
եղեալ գաւթարին և ընթերցայ
ձեզ ըստ կարգի գրելոցն վասն
15000 թումանին յերկրորդ
գրութեան իմոււմ. յամի 1816
ի ֆետր. 2.—, որոց զառաջինն
ևս ի 15 գեկտ. 1814.-ևս և
զայլս յետ նոցին գրեալո ընդ
ժամանակս ժամանակս, գոլով
պատրաստի առիս: Թէպէտե
ըստ խնդրոյ ձեր վասն անձ-
կութեան ժոմանակի ձերում,
մնացին աստէն առանց ըն-
թերցանութեան. այլ գոտանին

ամենայնքն, անդ ի սպասու նորին Վեհափառութեան, որովք վաղութեմն լուծեալք գտանին ամենայն. և պատասխանիք ի մասին յայտիկ և եթէ լինիցի թէ յետ բարւոք վերծանութեանց այնց գրութեանց իմոց գտցի առ նոյն տարակուսական իմն, դարձեալ ի յայտնելն պարտաւոր եմ լուծանել բազում բաւականութեամբ իմով:

№ 13. Վասն Զադար բէկին բասմայ սահաթ կամ գուրբին ըստ գրութեան ձեր տուաք որոց երկուսի գինն հազար զուռուշ էր, այն ևս պարտքով չէ հասած:

- Արդարեւ պարտաւոր եմ յայդմ շնորհաց Տեառն իմոյ համանգամայն և ուրախ եմ զի արժանի եղէց լսել վասն այնչափ պարտաւորութեան իմոյ իւրոյ Սրբութեան և կամ Սրբոյ Աթոռոյ մերում. ապաքին և չափ առնուլ արժան է և վասն այլոց, բայց ես բաւականութիւն ինձ համարելով զայսպիսի պարզ ծանօթութիւն իմ առանց յիշատակութեանց ամենայն այսպիսեաց հնոց և նորոց, պարտաւորեմ հատուցանել իւրոյ Սրբութեան վաղվազկի զայս գումար:

№ 14. Թէ վասն քո և թէ վասն եղբօրդ ինչ չարչարանք կրած եմ և լն. և լն:

Կրաւի զգալի իմն են ինձ և եղբօր իմոյ չարչարանք Տեառն մերոյ վասն մեր. զորս պար-

տիմք ճանաչել և գոհանալ միշտ սակայն արժան է ոչ զանց առնել և զայնու. զի Տէրն իմ յաթոռ քահանայապետութեան ամենայն Հայոց. խաղաղութիւն ի մէջ երկուց տէրութեանց. և և Ներսէսն Արքեպիսկոպոս ի Թիֆլիս. և յայսպիսի պատահմունս Տէր մեր վասն մեր յառաւելապատիկ վիշտս. և եղբայրն իմ փախստական և զրկեալ կայից գոյից իւրոց հայրենեաց առանց իւկը ինչ պատճառանաց: Ապաքէն խնդրեմ ոչ մոռանալ և զայն զի տէրն իմ ի Ս. Պետերբուրգ, զօրք երկուց տէրութեանցն ի պատերազմի և Ներսէսն յարգելանս յանապատի անդ կերևան, և ոչ առանց երաշխաւորացն երեւելեացն ի Հայոց յԵրևանցւոց և կամ ի կալանս Հասանիսնին Օթանղուլի խանին և որ առաւելն է մատնութեամբ նոյն Հասան խանին և այլոց Ղունց Ղաջառ խանից. Կացեալ յայտնի Արառ Միրզայի ուր ձայնն ըողոքչացն յինէն բարձրացեալ հնկեցուցանէր. Շահզատա Ներսէսն ուռուի որդի է և ոռուք հայր են սորա. Շահն զիս կաթողիկոս արար և սաքունութեամբ ընկեց զիս ա-

№ 15.—Քանի ամիս է որ
քեզ ըստ կարողացայ գիր գրել,
պատճառն Մաշաղի Աբդուլէն,
որ աչքն հանեցին. մեզ ևս
մատնած էին և այլն. գնացաք
յԱբարան առ Հասան խանն.
չերթաք: Եւ քանիցս անգամ
մեր գրեանքն բռնեցին, բայց
ոչինչ գտին:

ուաջնորդ եղեւ զօրաց նոցա և
նստաւ ի մէջ երկրին Երեանու
թնդանօթս ընկեց յամբոցն
Երեանու. այժմ ևս առաւել
ի հաւատարմութեան իւրում
որ առ ռուս, ի Պետերբուրգայ
ջանայ զայլ կաթողիկոս բերել
և այն և այն, բազում և զա-
նազանս զօրս մի առ մի թուելն
է աստ անարժան:

Ես քանիցու խօսեցեալ եմ
ի լուր կուսակալին և այլոց,
թէ բազում երկիւղիւ զահի
հարեալ Նորին Սրբութեանն,
ոչ վստահանայ գրել նաև ինձ
զհարկաւորսն. զմուաւ ածել և
զայս արժան է զի յաւուր տօ-
նի կըմիածնի ի մէջ գիշերի
մերկ և գօտելոյծ ածեալ ի
զազարապատն զբարսեղ եպիս-
կոպոսն ածին և զիս և տա-
րան առ Սարդարն ուր աւե-
տամառոյց եղեւ իսկոյն Զոլախ
Ալին, թէ ահա հանեն զաքս
քո և դու համարիս զքեղ
որպէս անպարտ եայն եայլն:

№ 16:—Կաւալեր կոչեցելոյ
մահուան ևս գիտէի, որ գու
և այլն. բայց գրագիրն ինքնին
ազդեալ էր. դարձն քը գրեցիք:

Վասն իմ ուրախութիւն էր
անպիտան կետնք կաւալերին.
զի երբեմնական զուարձու-
թեանն իմն կարէր լինել պատ-

ճառ, բայց զի վախճանեալ էր և գրեալ էր առիս սորին ոչ գրելոյ իմոյ յայտնեցի զպատճառն, թէ պատկառեցայ վասն առն այնպիսոյ կենազրաւ լինելոյ յարբեցութենէ զրել զմբխիթարական. այն զի միսիթարութիւն համարեալ կտրէր մահ նորա, քան կեանքն. մինչ հարբեցութիւն նորա վշտացուցանել ունէր զինքն և զայլս. ըստ այնմ (ըստ այսմ) և յատկացեալ Նորին Վեհափառութիւնն. իսկ եթէ պատկառեալ իցեմ յայսմիկ դատողութեան իմում, վկայ զԱստուած կոչեմ ուղղութեան բանիցս գրեցելոյ. զի և այսպէս եմ զիսորհուրդիմ գրեալ ի մասին հանգստեան կաւալերին:

№ 17. Քանիցս անգամ, թէ կուսակալին և երկրորդ գիր գրած եմ, թէ վասն այլ բանի և թէ վասն Մարտիրոս Եպիսկոպոսին, պատասխանն ըլ գտայ. և միշտ գրես թէ Տառառ Ֆրօն, այս ի՞նչ մաքրութիւն է և այլն և այն:

Ես զամենայն զգրութիւնոյիւրաքանչիւր ժամանակս հասուցեալ եմ ուր հասուցանելոցն էր, թէ ունիցին Նորին Սըրբազնութիւնն զկարծիս վասն ոչ հասուցանելոյ իմոյ հարցցեցնոսա. իսկ եթէ ոչ՝ իւրոյ Սըրբութեան ևս յայտնի է, զի ես չի և չեմ կարող ըւնադատել զնոսա ի պատասխանառութիւն, այն զի՝ և իմ բազում գրութիւնք մնան երբեմն առանց պատասխանառութեանց. որպէս և արդիս ևս գրութիւն իմ յաղագս հարկաւորացն վանքական կառավարութեանցն նոյն Մարտիրոս Եպիսկոպոսին, ի 6 յուլիսի և սցլոց ի հերուն հետէ:

Ա.Հ+Էպիսկոպոս Հայոց Արքառութեան-
ներսէն